

## ՆԵ՛Ղ ՕՐԵՐԻՑ ՄԵԿԸ

Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին, նայեց կոշիկների ծամուված ծա՛յրերին, դուրս եկավ սենյակից, դուռը փակեց կախովի կողպեքով, բանալին գրպանը կոխեց, անցավ բակի երկայնքով և բարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, որը մաքուր ու կարմրավուն, պլպլում էր հայելու պես, առավոտվա արևի

պայծառ ճառագայթներով ողողված: Նրան թվում էր, թե անասունները, երբ նրանց սպանդանոց են տանում, ճիշտ նույնը պիտի լինեն զգալիս, ինչ որ գգում էր ինքն այդ ըուպեին: Նա մի վտիտ երիտասարդ էր խիստ բարի աչքերով և անվստահ շարժումներով: Խոհանոցից դուրս եկող իմերել ծառային խնդրեց կամացուկ, որ տանտիրոջն իմաց տա, թե ուզում է տեսնել նրան: Մտռան, մոխրագույն բրդե շուխայի ետ ծալած երկայն ու լայն թևերը ցած թողնելով, գնաց նրա խնդիրքը կատարելու: Պատրիկյանը հետևից նայեց նրա երկարաճիտ փափուկ անկրունկ կոշիկներին, որոնք քայլելիս ոչ մի ձայն չէին հանում: Հետո աչքը գցեց խոհանոցի բաց պատուհանից ներս, որտեղ խոհարարը, ամբողջապես սպիտակազգեստ, ձյունի պես սպիտակ ու մաքուր արախշին գլխին, վարժ ձեռքերով փետրահան էր անում նոր մորթած վառիկներ և բերանով ինչ-որ պարերդ էր շվշվացնում: Մտռան դուրս եկավ և դռան մոտից ձեռքով արավ նրան: Պատրիկյանը զգուշորեն անցավ պատշգամբով, դռան մոտ սրբեց ոտները, ծառայի առաջնորդությամբ մտավ ճաշասենյակը, այնտեղից՝ ընդարձակ ու խիստ բարձր դահլիճը, որը կորած էր հսկայական ծաղկամանների, աթոռների, բազկաթոռների, սեղանների, դահավորակների, բազմոցների մեջ և կանգ առավ տանտիրոջ առանձնասենյակի դռան առջև: Մտռան դուռը բաց արեց, ներս հրավիրեց նրան, իսկ ինքը հեռացավ:

Գուցե ամենամոլեռանդ առտվածապաշտը այնպիսի երկյուղածությամբ շմտներ սուրբ խորանը, ինչպես մտավ Պատրիկյանը տանտիրոջ առանձնասենյակը: Տանտերը, որի ազգանունը փողոցի շքադռան պղնձե սախտակի վրա փորագրված էր Դավիթ Ծամիշ Աղամիրով, մոտ 40—45 տարեկան տղամարդ էր խիստ ջղուտ, կարծես բրձնզից ձուլված դեմքով, սպիտակախառն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուքով: Նա նստած էր թղթերով, թղթապանակներով, գրքերով և անթիվ մանր-մունր բաներով ծանրաբեռնված ահագին գրասեղանի առջև և գրում էր:

— Ներեցեք, ես՝ իսկույն, — ասաց նա, մի վայրկյան նայելով այցելուին պենսնեի վերևից, և շարունակեց գրել:

Պատրիկյանը մնաց կանգնած:

— Խնդրեմ նստեք, — ասաց տանտերը, շարունակելով գրել:

Պատրիկյանը կամաց նստեց, գլխարկը ծնկների վրա բռնած, և նայեց շուրջը: Սենյակը զարդարված էր, դահլիճի պես, փարթամորեն: Դահավորանքի մեջ աչքի էր ընկնում ոչ այնքան ճաշակը, որքան փափկակեցության թուլությունը: Պատրիկյանը ուր նայում էր, տեսնում էր գորգ ու թավշյա բարձիկներ: Կար և գրքերի մի շատ երկար պահարան

ապակյա դռներով, որի բոլոր դարակները չիքն էին ոսկեկազմ գրքերով՝  
գորքի պես խիստ կանոնավոր կողք կողքի շարված: Այդ պահարանն էլ,  
անշուշտ, սենյակի անհրաժեշտ ճանաչված կահավորանքից և գարդա-  
քանքներից մեկն էր կազմում. այլապես Պատրիկյանը չէր կարծում, թե  
Դավիթ Տոմիշը ժամանակ ունենար այդ ստվարահատոր գրքերից որևէ  
մեկը ձեռքն առնելու, որովհետև շափազանց գբաղված էր իր մասնա-  
վոր և հասարակական գործերով. նա գործարանատեր էր, քաղաքային  
գումայի իրավասու, քաղաքային մի քանի հանձնաժողովների անդամ,  
բանկի վարչության անդամ, կլուբի ավագ, դպրոցի հոգաբարձու, և կե-  
ղեցու երեցփոխ և ո՞վ գիտե ուրիշ էլ ի՞նչ:

Սգուտ քաղելով այն հանգամանքից, որ տանտերը գլուխը կախ՝  
ջարունակում էր գրել, Պատրիկյանն ուղեց վեր կենալ պահարանի  
գրքերն աչքի անցնելու, բայց չհամարձակվեց տեղից շարժվել: Հայացքը  
գարձրեց տանտիրոջ վրա և տեսավ, որ նա գրում է ձեռքի համար-  
ձակ շարժումով և անդադար կրծում է վերին շրթունքի ձախ կողմը:

— Նո՛ւս, ի՞նչ կհրամայեք, — ասաց Դավիթ Տոմիշը գրությունը  
վերջացնելուց հետո՝ սև մարմարի ծանր ծծողականը թրրխկ-թրրխկաց-  
նելով գրած թղթի վրա:

— Ես... ներեցեք, — կամաց արտասանեց Պատրիկյանը իր ասե-  
լիքը նախապատրաստած մարդու շփոթմունքով: — Երեկ գիշեր դուք  
նորից հիշեցրել էիք սենյակիս վարձը... Ես և կել եմ խնդրելու, որ, եթե  
կարելի է, մի քանի օր էլ սպասեք:

Տանտերը վերցրեց պենսնեն, արմուճիկներով կռթնեց գրասեղանին  
և նայեց նրան իր լուրջ, եռանդուն աչքերով:

— Եղբայր պատվական, — ասաց նա, — ես, կարծեմ, յոթն օր է  
սպասում եմ, չէ՞:

Պատրիկյանը աչքերը վար թողեց:

— Այո, բայց... խնդրում եմ, դարձյալ մի քանի օր... եթե կա-  
րելի է:

— Բանը մի քանի օրվա մեջ չէ, — վրա բերեց Դավիթ Տոմիշը: —  
Մի քանի օր, ինչո՞ւ չէ, կարելի է սպասել, և տեսնում եք, որ սպասում  
եմ: Բայց ցավն այն է, որ մի քանի օրից հետո, երբ դարձյալ ինքս  
ստիպված կլինեմ հիշեցնելու ձեր պարտքը, դուք կգաք ինձ մոտ, ինչ-  
պես հիմա եք եկել, և դարձյալ կխնդրեք այդպես, որ էլի մի քանի  
օր սպասեմ: Ես այդ փորձով գիտեմ և այդ բանի վերջը չեմ տեսնում:  
Ուստի մի անգամ առմիշտ կանոն եմ դարձրել ինձ համար, որովհետև  
ինքս շատ ճշտապահ մարդ եմ, որ երբ կենողներիցս որևէ մեկը կանո-

նախորապես և ժամանակին չի վճարում բնակարանի վարձը, առաջարկում են անմիջապես դատարկել բնակարանը: Ձեզ էլ ասում են— եթե չեք կարող վճարել, դատարկեցեք սենյակը: Ես ինքս ամեն ամիս վճարելիքն էր ունեմ, և իմ պարտատերը, բանկը, չի սպասում, որ ես սպասեմ անվերջ:

Դավիթ Ծոմիրը խոսում էր վճուպան տունով և սուր-սուր նայում Պատրիկյանի խեղճ ու կրակ դեմքին:

— Ես հասկանում եմ ձեր դրուժյունը, — թոթովեց Պատրիկյանը, թեև ամենևին չէր հասկանում, թե ի՞նչպես կարող էր իր վճարելիք ամսական մի քանի ուրբին որևէ նշանակութուն ունենալ այդ հարուստ մարդու համար: — Բայց դուք էլ, խնդրում եմ, մտեք իմ դրուժյունը: Ես ուսուցիչ էի գավառում, ինչպես գիտեք, կառավարութեանը փակեց մեր դպրոցները. այժմ ես անգործ եմ: Ուզում էի գնալ արտասահման ուսումս շարունակելու, գիմեցի մի քանի բարերարների, մերժում ստացա: Հետո մտա մի վաճառականի մոտ իբրև գործակատար. հուշս ունեի, թե խնայողութեամբ այնքան կհավաքեմ, որ կարող կլինեմ ձգտումս իրագործել, բայց հիվանդացա և խնայած բոլոր փողերս ծախսեցի: Հիմա ես ոչինչ չունեմ. օրեր են պատահում, որ քաղցած եմ մն...

— Ի՞նչ հարկավոր է, որ այդ քաները պատմում եք ինձ, — շտապեց ընդհատել Պատրիկյանին Դավիթ Ծոմիրը, և նրա բրոնդյա դեմքի վրա երևացին արգահատանքի և գծգոհութեան պարզ նշաններ: — Դուք, կրթված երիտասարդ եք, և ձեր անձնասիրությունը չպետք է թույլ տա, որ ուրիշի պատմեք ձեր մասնավոր կյանքը: Ես էլ հազար ու մի ցավ ու դարդեր ունեմ, նստեմ պատմե՞մ ձեզ: Կավ չէ, այդ լավ չէ: Ասում եք՝ մի քանի օր — համեցեք, մի քանի օր էլ կսպասեմ: Միայն ես չեմ հասկանում, թե ո՞րտեղից պիտի կարողանաք վճարել, քանի որ ասում եք ոչինչ չունեք և անգործ եք:

Պատրիկյանը աչքերը խոնարհեց և սկսեց գլխարկը մեքենայաբար շուռումուռ տալ ծնկան վրա:

— Ես... գիտե՞ք... ես... երկու գիրք ունեմ տպագրված, — ասաց նա շփոթված, կարծես ամաշելով, որ այդպիսի բան ունի արած, — երկար ժամանակ է՝ չեմ մտել գրախանութ, այսօր կմտնեմ. երևի ծախած կլինեն, որ...

— Դուք գրո՞ղ եք, — հարցրեց տանտերը, դարմացած նայելով նրա շփոթված աչքերին:

— Չի կարելի ասել գրող, բայց... գրում եմ:

— Ի՞նչ եք գրում:

Պատրիկյանը գլուխը բարձրացրեց և նայեց նրան ամոթխածութեան ժախտով:

— Ո՞վ գիտե... գրում եմ, է՛լի...

— Դե դուք գիտեք,— ասաց տանտերը և վեր կացավ: Նրան հետեւեց և Պատրիկյանը:— Ձեր կողքի կենողը, այն հրեա կինը, որ շահակներ և կողպեքներ է ծախում բազի դռան մոտ, տասը տարի է կենում է, և շեմ հիշում մի ամիս, որ ամենայն նշաութեամբ վճարած չիինի բնակարանի և սեղանի վարձը, շնայելով, որ մեն-մենակ այնքան էլ ահագին ընտանիք է պահում: Ասելս այն է, որ...

Նա խոսքը շվերջացրեց, ըստ երևույթին հանկարծ ինչ-որ բան հիշելով, և սկսեց շուտումուտ տալ գրասեղանի վրա թափված թղթերը:

— Ինչեիցե, ցտեսութուն,— ասաց առանց այլևս ուշադրութուն զարձնելու Պատրիկյանի վրա:— Մի քանի օր էլ կսպասեմ:

Պատրիկյանը դուրս եկավ: Ճաշասենյակով անցնելիս տեսավ տանտիրոջ կնոջը,— շատ բարձր և շատ լղար մի կին անհրապույր դեմքով, որը սեղանի ծայրին դրած արծաթյա հեշտաեռի մոտ կանգնած՝ թեչի բաժակներն էր լվանում: Մտաբ կանգնած էր նրա փոքրիկ տղան և սպիտակ հացի վրա կարագ ու մեղր քսելով՝ ազահարար կուլումուլ էր տալիս:

— Սենյակի վարձը բերի՞ք,— կանչեց Պատրիկյանի հետեւից տանտիրիկինը, ևրբ նա սուս ու փուս դիմում էր դեպի պատշգամբի դուռը:

Պատրիկյանը կանգ առավ:

— Ոչ, տիկին:

— Ինչո՞ւ:

— Պարոնին խնդրեցի, և նա համաձայնեց մի քանի օր էլ սպասել:

— Մի քանի օր էլ, մի քանի օր էլ,— բավական կուպիտ կերպով վրա բերեց տանտիրիկինը, թեյ լցնելով տղայի համար:— Չենք իմանում, ե՞րբ պիտի վերջանա ձեր մի քանի օրը: Եվ դուք օգուտ եք քաղում նրա բարութունից: Այդպես չի կարելի: Կամ պետք է ժամանակին վճարեք, կամ, եթե չեք կարող, դատարկեք սենյակը:

— Տիկին,— ուղեց արդարանալ Պատրիկյանը, բայց տիկինը աճելի ևս կուպտութեամբ կտրեց նրա խոսքը:

— Լսել անգամ չեմ ուզում:

Ու վաչրացած շուտ եկավ դեպի բուֆետը:

Պատրիկյանը շրթունքները սեղմեց ատամների մեջ և դուրս գնաց:

Պատշգամբում նրա դեմ ելավ տանտիրոջ աղջիկը, որը դեմքով շատ նման էր մորը, և նրա ֆրանսուհի դաստիարակչուհին, որոնք թեան-

ցուկ զբոսնում էին աշնանային արևի ախորժեղի ջերմ ճառագայթների տակ և ջարդում էին ֆրանսերեն կանանց հատուկ անդադրում շատախոսությամբ և խոսքերը խլելով իրար բերանից: Երկայն պատշգամբով անցնելիս աշխատում էր քայլել այնպես, որ նրանք չտեսնեն անդրա՝ վարտիքի մաշված, տեղ-տեղ պատռված տոտերը: Խոհանոցին որ մոտեցավ, լսեց մի փշշոց և թշշուց և նրա քթովը դիպավ այնքան ախորժեղի մի հոտ, որ նրա անոթի փոքրում քոչոր աղիքները ոլոր-մոլոր եկան: Ինչպես երևում էր, վառիկներն արդեն տապակվում էին՝ թեյի հետ վայելելու համար:

Պատրիկյանը իջավ բակը և դեպի փողոց տանող լայն միջանցքի մեջ, բակի դռան մոտ, տեսավ հարևան գիրուկ ու կլորիկ հրեա կնոջը՝ նստած տաբուրետի վրա, երկայն ու նեղ սեղանի ծայրին, որի վրա որոշ կանոնավորությամբ դարսված էին ամեն տեսակ դանակներ, մրկրատներ, կողպեքներ, աքցաններ, մուրճեր, բզեր, պորտմոնեններ և այլ մանրուքներ: «Երջանի՛կ կին. համ ինքն է ապրում իր ահագին ընտանիքով, համ էլ սենյակի վարձն է տալիս ամենայն ճշտությամբ ու շի վայելում տանտերերի թուքն ու մուրը», — մտածեց Պատրիկյանը, և հրեուհու մոտով անցնելիս բարևեց նրան:

— Զաչեմ շեղողնյա նե բղալի գաղյաչեյ վաղը (ինչո՞ւ այսօր տաք ջուր չվերցրիք), — կանչեց նրա հետևից կինը ռուսերեն, հրեաներին հատուկ առողջանությամբ ս-ն շ և ր-ն ղ հնչելով:

Պատրիկյանը կանգ առավ և նայեց նրա բարի գիրուկ դեմքին:

— Որովհետև շաքարս հատել է, — պատասխանեց նա մի տեսակ անհոգությամբ:

Հրեուհին զարմանքից մինչև անգամ վեր կացավ տաբուրետից:

— Ա՛յ քեզ բան, — բացականչեց նա: — Շաքար էլ կտայինք, ի՞նչ կա որ:

— Զէ, առանց այն էլ ես շատ եմ պարտական ձեզ:

— Ի՞նչ պարտական: Ամեն օր մի քանի քաժակ տաք ջուր տալով մեծ բա՛ն ենք արել, ի՞նչ է: Շաքար չունեիք, կասեիք. մի երկու կտոր շաքարն ի՞նչ բան է որ:

— Բան չկա, մի օր թեյ շիմելով շենք մեռնի, — ասաց Պատրիկյանը, ծիծաղեց նույն անհոգությամբ և շտապեց դուրս գնալ փողոց:

Այդ փողոցն իսկապես քաղաքի վաճառաշահ շուկաներից մեկն էր՝ ի աղաղակով և ծխարով: Ժամը տասին մոտ էր: Արևը նոր սկսել էր հալել գիշերը կտուրների վրա նստած եղյամը, որն այժմ զուր գառած՝ կտկտալով թափվում էր երկայն ջրախողովակներով ներքև և փոքրիկ

գրեք կապում մայթերի վրա: Պատրիկյանը զգաց, որ ստվերի մեջ օղբ  
բավական ցուրտ է ու խոնավ, և ձեռքերը անդրավարտիքի գրպանները  
կոխած, աշխատում էր գնալ այն տեղերով, ուր արևը մաքուր երկնքից  
թափում էր իր ճառագայթները: Սակայն արևի տակ էլ նրա մարմինը  
սարսռում էր. նրան թվում էր, թե դրա պատճառը ոչ թե ձմեռնամուտ  
աշնանային եղանակն է և ոչ թե այն, որ ինքը տաք չի հագնված, այլ  
այն, որ այդ առավոտ ոչ թեյ է խմել և ոչ որևէ բան կերել: Մտում էին  
առավելապես ձեռքերը, որոնց ինչքան էլ աշխատում էր խորը կոխել  
գրպանների մեջ, այնուամենայնիվ երկարամյա սերթուկի կարճ թևերը  
բաց էին թողնում նրա դաստակները:

Պատրիկյանի առաջին գործն այն եղավ, որ մտավ գրախանութ:  
Հույս ուներ, թե այնքան կստանար, որ սենյակի վարձը հանելուց հետո  
մի բան էլ կմնար իբրև ապրուստի փող: Սակայն գրախանութում նրան  
ասացին, թե վերջին երեք ամսվա ընթացքում նրա երկու գրքույկներից  
մեկն ամենեին չի ծախվել, իսկ մյուսից ծախվել է հինգ օրինակ միայն  
և, կոմիտիայի տոկոսը հանելուց հետո, նրան հանձնեցին 1 ո. 20 կ.:  
Պատրիկյանը, հիասթափության ժպիտը դեմքին, փողը գրպանն ածեց  
և դուրս եկավ գրախանութից՝ ճնշված այնպիսի մի զգացման տակ,  
որպիսին ունենում են անսովոր մուրացիկները՝ ողորմություն ստանա-  
լուց հետո: Ամոթի և նվաստացման կարմիրն երեսին մի բոլոր կանգ  
առավ գրախանութի ցուցափեղկի առջև, որի թեթև քրտնած լայն ապա-  
կու միջից մի հայացք ձգեց ցուցանակի վրա նկատելի տեղում հպար-  
տորեն շարված ուսերեն փարթամ գրքերին, ապա մի անկյունում ամոթ-  
խածությամբ իրար կողքի կպած հայերեն վտիտ գրքույկներին, որոնց  
մեջ տեսավ և իր երկու լղարիկ գրքույկը, հետո երեսը շուռ տվեց և հե-  
ռացավ՝ դառն մտածմունքների մեջ խորասուղված: Մոռացել էր թեյի  
չմափազն էլ, քաղցն էլ և, որովհետև ուրիշ տեղ շուներ գնալու և մրսում  
էր, քայլերն ուղղեց դեպի խմբագրատուն:

Խմբագրատանը, ինչպես միշտ, այս անգամ էլ նստած էր մեն-  
մենակ քարտուղարը— շորիկ-մորիկ մի երիտասարդ՝ պարզ ակնոցով  
և աջ ձեռքի ճկույթի վրա կեսվերշոկաչափ աճեցրած սրածայր եղուն-  
գով,— և արագ գրում էր երկայն ու նեղ թղթերի վրա, ճկույթը խիստ  
որոշակի առանձնացրած հարևան մատից:

Պատրիկյանը, իբրև պարապ մարդ և ձրի աշխատակից, խմբագրա-  
տան ամենօրյա աչքելուն էր, այնպես որ քարտուղարն ու նա, որոնք  
մտերիմ ընկերներ էին, այլևս չէին բարևում իրար տեսնելիս: Այս  
անգամ էլ Պատրիկյանը քարտուղարի սենյակը մտավ սուս ու փուս,

նստեց նրա դրասեղանի ծայրին, վերցրեց տեղական ուս թերթերից մեկը, որոնցից քարտուղարը լուրի էր քաղում, և սկսեց աչքի անցկացնել: Տեղական լուրերից մեկը կարդալուց հետո հարցրեց.

— Ինչո՞ւ այս լուրը չես նշանակել:

— Ո՞ր լուրը, — հարցրեց քարտուղարը շարունակելով դրել:

— Ինչ-որ նոր հռչակավոր երգիչ է եկել, ժապիճովը: Գասարոյի է հրավիրված օպերային թատրոնում երգելու:

— Հե՛րն անիժեմ, — սրտանց արտասանեց քարտուղարը, առանց պոխը բարձրացնելու թղթի վրայից:— Մե՞զ ինչ: Բոլոր թերթերին հայտարարություններ են տալիս, սեղոնային ձրի տոմսակներ են տալիս, իսկ մեզ շան տեղ էլ չեն դնում: Եվ մենք պետք է վեր կենանք նրանց համար ուկլամեն՞ք տպենք:— Տես, թե ուրիշ բան աչքիցս թոցրել եմ, ասա:

Ներս մտավ տպարանական փոքրիկ աշակերտը մրոտ երեսով ու ձեռքերով և ամառվա բարակ կապույտ բլուզով, որի մեջ ցրտից սրբսրբում էր նրա վտիտ մարմինը:

— Նութ, — ասաց նա յու-ն ու հնչելով:

— Սպասիր մի քիչ, — ասաց քարտուղարը, և փրիչը նրա ձեռքին սկսեց շարժվել ավելի արագ: Գրեց վերջացրեց թուղթը և մյուս թղթերի հետ ծալեց ավնց աշակերտին:— Ահա տար, որ էլի գալու լինես, հարցրու էլի քանի կոլոն հարկավոր կլինի:

Աշակերտը դուրս գնաց, գլխարկը փողոցում ծածկելով:

— Դե՛հ, Պատրիկ, պարապ մի՛ նստի, — ասաց քարտուղարն ակնոցն ուղղելով և նոր գործի պատրաստվելով:— Նյութ շունենք, մի բան դրիր ձեռաց:

— Տրամադրություն չունեմ, — ասաց Պատրիկյանը մելամաղձորենա

— Ես հեստիկ եմ, որ խեղդվում եմ, ա՛յ, տրամադրությունից:

— Դու մեքենա ես դարձել:

— Շատ մի՛ խոսիր, գրիր, հոգիս դուրս է գալիս մենակ: Գիշերն էլ մինչև ժամը երկուսը տպարանումն եմ անցկացրել, որովհետև սրբապիշր հիվանդացել է: Ես վախենում եմ վաղը չէ մյուս օրը ցրիչի դեր էլ կատարեմ:

— Ո՞ր է խմբագիրը, ինչո՞ւ չի օգնում:

— Գնացել է փող ճարելու, որովհետև տպարանատերը սպանացել է, որ եթե այսօր փող չստանա, համարը բաց չի թողնի: Գրաշարներն էլ մյուս կողմից են փող պահանջում: Հետո՞ փոստը, հեռագիրը, տանտերը — ո՞ր մեկն ասեմ: Էգուց-էլօր բաժանորդագրություն ենք



բանալու, թերթը պետք է կանոնավոր հրատարակենք, որ բաժանորդները շխտանեն, և հանկարծ — այսպիսի խայտառակութիւն... Գրիր, գրիր, խոսելու ժամանակ չէ:

— Ի՞նչ գրեմ:

— Ի՞նչ ուզում ես: Ուզում ես՝ լուսնի մասին, ուզում ես՝ աստղերի, միայն թե թերթը լցնենք:

Պատրիկյանը դանդաղորեն մի քանի թերթ թուղթ քաշեց առաջը, գրիչը թաթախեց թանաքամանի մեջ, կարճ ժամանակ մտածեց և գրեց վերնագիրը. «Մ ր ե ք ա մ ի ս, և հ ի ն գ օ թ ի ն ա կ մ ի ա յ ն», տակն էլ գիծ քաշեց: Այստեղ կանգ առավ, ճակատը շփեց և, երկար մտածելուց հետո, սկսեց.

«Այս օրերս պատահեցի մեր սկսնակ գրողներից մեկին, որի համար կրիտիկան կամ այն, ինչ որ մեզնում կրիտիկա է անվանվում, միաբերան վկայել է, որ ձիրքից դուրի չէ: Նա դանդատվեց ինձ, թե ահադին նեղութիւններով հրատարակած իր մի գրքից երեք ամսվա ընթացքում վաճառվել է հինգ (հարյուր չկարծեք) հատ միայն, իսկ մյուսից՝ ոչ մի օրինակ: Այս տխուր իրողութիւնը շատ լավ ծանրաշափ կարող է լինել, ցույց տալու համար մեր հասարակութեան ընթերցասիրութեան չափը և, միևնույն ժամանակ, շատ դառն մտածմունքների առիթ է տալիս մեր բրականութեան ապագայի մասին: Մեր հասարակութիւնը...»

Պատրիկյանը նորից կանգ առավ, մտածեց, մտածեց, հետո գրիչը վար գրեց և ասաց.

— Այստեղ ոչինչ չի կարելի գրել. մատներիս ծայրերը փետացան:

— Տո՛, գրի է՛, — բղավեց քարտուղարը, որի գրիչը շարունակում էր արագ շարժվել թղթի վրա: — Վաղուց է՞ այդքան քնքշացել ես: Կարծես թե քո հավաքունը սրանից տաք լինի, անունն էլ սենյակ ես գրել: Գրի՛ր:

Պատրիկյանը սառած ձեռքերը շփեց իրար, բերնի գոլորշիով տաքացրեց մատների ծայրերը, նորից առավ գրիչը, գիծ քաշեց «Մեր հասարակութիւն» բառերի վրա և շարունակեց.

«Ճիշտ է, չի կարելի պնդել, թե մեր հասարակութիւնն ընթերցասեր չէ, բայց...»

— Կարելի՞ է մտնել, — լավեց մի ուժեղ բարիտոն:

Պատրիկյանը և քարտուղարը միաժամանակ բարձրացրին գլուխները և նայեցին դիպի նախասենյակի դուռը: Այնտեղ կանգնած էր մի թի. հավետ երիտասարդ, բեղերն ու մորուքը սափրած, թանկագին մուշտակ, քի և պլպլան ցիլինդրով:

— Խնդրեմ, — մեքենայաբար արտասանեց քարտուղարը: —

Այցելուն մտավ իստ անձնավատահ քայլերով, ցիլինդրը վերցրեց և ներկայացրեց իրեն.

— Կայսերական թատրոնների երգիչ Ջափինյան: Երևի գիտեք, որ ես զաստրուլով հրավիրված եմ աշտեղի անբունական թատրոնում ևրդելու:

— Ա՛խ, ինչպես չէ, — արտասանեց քարտուղարը, մեքենայաբար վեր կենալով տեղից և ակամա հարգանքով սեղմելով երգչի ձեռքը: — Խնդրեմ նստեք:

Ջափինյանը նախքան նստելը ետ արեց մուշտակի կոճակները, կործքը բաց արեց, ասելով՝ «ՈւՖ, շատ շոգ է», ցիլինդրը գլխի վայր գրեց գրասեղանի վրա, կաշու թանկագին ձեռնոցը ձգեց ցիլինդրի մեջ և ապա թե նստեց քարտուղարի մոտ բերած աթոռի վրա: Հետո տեսնելով, որ գրասեղանը ծածկված է փոշով, ցիլինդրի տակ մի լրագիր գրեց:

— Խմբագիրն աշտեղ չէ՞, — հարցրեց թաշկինակով սրբելով նակատը:

— Դժբախտաբար ոչ, — պատասխանեց քարտուղարը ստրկական-հարգական ծպիտով և ակամա ուշադրություն դարձրեց երգչի կարմիր ատյասի փողկապի վրա հուրհրատին տվող ադամանդին: Նստեց նորից և չէր իմանում ինչպես անի, որ այցելուի աչքից ծածկի իր կեղտոտ, ճմրթված մանժետները:

— Իբրև հայ երգիչ, իմ բարոյական պարտքս համարեցի այցելել ձեր խմբագրատուն, — ասաց Ջափինյանը: — Երևի գիտեք, որ ես ձայնա մշակել եմ Իտալիայում, որտեղից, սրանից վեց տարի առաջ, ինձ հրավիրեցին Օդեսա: Երկրորդ տարին երգեցի Իրկուտսկում, հետո մի-մի սեզոն երգել եմ Խարկով, Կիև, Մոսկվա, իսկ անցյալ սեզոնին երգում էի Պետերբուրգում: Այժմ ինձ հրավիրել են Թիֆլիս: Թիֆլիսը երաժշտական քաղաք է և, կարծում եմ, կգնահատի ինձ ինչպես հարկն է: Ներեցեք, դուք ստանո՞ւմ եք մայրաքաղաքի թերթերը:

— Ինչպե՞ս չէ:

— Ուրեմն անշուշտ կարդացած կլինեք իմ մասին գրած սեզենդիաները: Ամենքը միաբերան հիացած են: Մի քանի օտարալեզու թերթեր միայն, ինչպես «Новое время»-ն և «Свет»-ը, աշխատում էին ինձ գլորել, որովհետև իմացել էին, որ հայ եմ, բայց շաշողվեց: Ի՞նչ էջանակություն ունի ես հայ եմ թե ուս. ես միայն երգիչ եմ. կարող

Էմ այսօր հայերեն կրգել, մադր սուսերեն, մյուս օրը իտալերեն: Այդպես շէ՞:

— Իհարկէ:

— Ճիշտ է, աֆիշների վրա ժ ա պ ի ն ո վ էմ գրվում, բայց այդ ոչ թե նրա համար, որ ուզում էմ ինձ սուս ցույց տալ, այլ այնպես կգրվի Իվանով կամ Սիդորով, այլ նրա համար միայն, որ Ջափինյան ազգանունը, ինչպե՞ս գրես— սուսերեն— Джапиниан? սուսերեն ոչ չ կա, ոչ փ: Թե շէ, հայերեն միշտ Ջափինյան էմ գրվում և երբեք էլ չեմ ծածկում, որ հայ էմ: Ես ձեզ մի ուրիշ բան ասեմ,— շարունակեց շատախոս երգիչը,— Օդեսայի անտրպրենյորս փորձեց ինձ նոր հրավիրած ժամանակ աֆիշի վրա ազգանունս գրել ժ ա պ ի ն ի, բայց ես շատ քաղաքավարի կերպով հասկացրի նրան, որ ոչ մի պայմանով թույլ չեմ տա իտալացի մկրտելու ինձ, շնայելով, որ իտալացի երգիչների անունն առհասարակ շատ հարգի է Ռուսաստանում: Թե շէ, որ ուզենայի դավաճանել ազգիս և հավատիս, ավելի լավ կանեի և ավելի շահավետ կլիներ գրվելի ժ ա պ ի ն ի, քան թե ժ ա պ ի ն ո վ: Այնպես շէ՞:

— Իհարկէ,— նորից համաձայնեց քարտուղարը:

Երգիչը խոսում էր դեռ շատ երկար և բացառապես իր մասին: Նրա ձայնը հնչում էր շատ սուսուց և ինքնավստահ: «Ե՞րբ պիտի վերջացնի ու կորչի»,— մտածում էր քարտուղարը, սակայն առանց դժգոհության որևէ նշան ցույց տալու: Ընդհակառակը, շարունակում էր լուռ լսել նրան նույն ստրկական-հարգական ժպիտը դեմքին:

— Ինչևիցե,— վերջապես վերջ տվեց իր շատախոսությանը երգիչը և վեր կացավ:— Ես ձեզ շիանդարեմ: Իմ խոնարհ հարգանքներս պարոն խմբազրին:— Այս խոսքերի հետ երգիչը ծոցից հանեց իր այցե-տոմսը և դրեց քարտուղարի առջև:— Հույս ունեմ, որ նա, ինչպես և դուք, շնորհ կբերեք լսելու ինձ: Իմ առաջին դերյուստը լինելու է ամսույս տասին: Երդէլու էմ Օնեգինի պարտիան: Հետո դուրս կգամ «Մադեպա»-ի, «Կնյայ Իգոր»-ի, «Կուպեց Կալաշնիկով»-ի, «Ցարսկայա նեվեստա»-ի, «Ժիզն զա դարյա»-ի, «Ռուսլան և Լյուդմիլա»-ի, «Ռուսալկա»-ի և ուրիշ օպերաների մեջ: Ցանեսություն:

Ջափինյանն ամուր և երկար սեղմեց քարտուղարի ձեռքը, թեթևակի գլուխ տվեց մինչև այժմ գրասեղանի ծայրին սուս ու փուս կուշեկամ Պատրիկյանին, ցիլինդրը ծածկեց և դուրս գնաց նույնսիսի քայլերով, ինչպես որ մտավ հատակը թրխկթրխկացնելով իր սլալան կոշիկների կանացի բարձր ու բարակ կրունկներով:

Քարտուղարը մինչև դուռը ճանապարհ դրեց նրան և, երբ վերա-

դարձաւ, ձեռքերի ափերը խփեց իրար և բացականչեց ծայր աստիճան ապշած.

— Փա՛հ... տեսա՞ր, Պատրիկ: Գիտե՞ս ով էր: Երեկ-մեկել օրվա քելեխ ուտող տիրացուն էր, է՛... Նո՛ր հիշեցի, Պատրիկ ջա՛ն, նոր տմբագիրը պատմում է, թե երեսփոխանական ընտրութիւնների մասին որ հայտարարութիւնն էր բերում, շէր համարձակվում դռան շեմքից առաջ գալ, իսկ հիմա... իր բարոյական պարտքն է համարել այցելութիւն տալու խմբագրութեանը: Յիլինդրի տակ լրագիր դրեց, որ շփոշտվի: Տեսա՞ր նրա փողկապի ադամանդը, մուշտակը: Մենք աչտեղ ցրտից կաղկանձում ենք, իսկ նա քրտինքն էր սրբում... Գնացել վարժապետ և գրող ես դառել, վա՛յ, գրողը տանի քեզ, Պատրիկ ջան, գրո՛ղը... ինձ էլ քեզ հետ,— ավելացրեց քարտուղարը և գնաց նստեց իր տեղը:

— Դու ինձ այս ասա, հիմա լուրը կգրես, շէ՞,— հարցրեց Պատրիկյանը հեղևորեն ժպտալով:

Քարտուղարը պատասխանի տեղ ձեռքերը տարածեց խաշելութեան սեւ, ուտերը վեր քաշեց կոմիկական տարակուսանքով, կարճ ժամանակ մտախոհութեան մեջ ընկաւ, հետո հանկարծ նայեց ծոցի ժամացույցին և բացականչեց ոչ այնքան զայրացած, որքան զարմացած.

— Ինչքան էլ ժամանակ խլեց անիծածը... Իսկ տպարանում նշուի՞ չկա: Գրիր, գրիր, Պատրիկ ջան, մինչև որ տեսնենք ինչ է դուրս գալիս այս էշի մարտիրոսութիւնից:

— «Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ...»,— արտասանեց Պատրիկյանը, առավ գրիչը և պատրաստվեց շարունակել սկսած հոդվածն անսիրտ և դառնացած, ինքն էլ շիմանալով ում և ինչի դեմ:

Իսկ այդ միջոցին քարտուղարն արդեն գրում էր իր մանր ու փութկոտ գրերով. «Մեր հայրենակից երգիչ Զափինյանը (բեմական ազգանունը Փապինով) գաստրոլով հրավիրված է Լրդելու Թիֆլիսի արքունական օպերային թատրոնում: Իտալիայում իր արվեստը կատարելագործելուց հետո նա վերջին վեց տարվա ընթացքում երգել է Թուսաստանի զանազան քաղաքներում, ի միջի այլոց՝ Մոսկվայում և Պետերբուրգում, ուր, տեղական թերթերի վկայութեամբ, մեծ հաջողութիւն է ունեցել Թիֆլիսում նա առաջին անգամ բեմ է ելնելու ամսույս 10-ին Զայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի մեջ, Օնեգինի դերում»:

Նա ուզում էր մի քանի խոսք էլ ավելացնել, հասարակութեան ուշադրութիւնը հրավիրելով հայ տաղանդի վրա, բայց հիշելով, թե անցյալում ի՛նչ է եղել նա, վախեցաւ, որ նրան ճանաչող ընթերցողները

ժաղրի ենթարկեն թերթը, ուստի բավական համարեց գրածը և մի կողմ գրեց: Հետո նայեց Պատրիկյանին և տեսնելով, որ նա գրում է շատ գանդաղ և անդադար գլուխը քորելով, ասաց.

— Պատրիկ ջան, շո՛ւտ արա, թե չէ, հրես որտեղ որ է՝ կգա պատիկ հոգեառս և նշուի կպահանջի:

Մտավ էքսպեդիտորը՝ պոստից բերած մի կույտ լրագրեր և նամակներ ձեռքին: Քարտուղարն ամենից առաջ վրա ընկավ նամակներին և սկսեց աչքի անցկացնել: Այնքան վարժվել էր, որ մի քանի տող սկզբից, մի քանի տող մեջտեղից և մի քանի տող վերջից կարդալուց հետո հասկանում էր ամբողջ նամակի բովանդակությունը և իսկույն էլ վճռում՝ կարելի՞ էր տպել, թե ոչ:

— Վայ, այս անիծածները կարծես խոսքը մեկ են արել, որ գրեն քահանաների, տիրացուների և հոգաբարձուների մասին, — բացականչեց նա մի քանի նամակներ աչքի անցկացնելուց հետո: — Քահանա և տիրացու, տիրացու և հոգաբարձու, հոգաբարձու և տիրացու... Կարծես թե էլ ուրիշ բան չկա գրելու, ես ձեր...

Եվ դաշրացած քարտուղարի բերանից ակամա դուրս թռան ինտելիգենտ մարդուն անվայել մի քանի հաչհոչական խոսքեր քահանաներից, տիրացուներից և հոգաբարձուներից դուրս ուրիշ նշուի չգտնող գավառական թղթակիցների հասցեին: Նա վերցրեց այդ նամակները և ուզում էր մեկեն պատռել ու ձգել գրասեղանի տակ դրած զամբյուղը, բայց հիշելով, որ տպարանում նշուի չկա, մի կողմ գրեց: Նույն կարգով շարունակեց աչքի անցկացնել մնացած նամակները և, ինչպես երևում էր, այդ նամակներն էլ քանի պետք չէին, որովհետև նա իր երկայն ու շոր մատներով ջղայնորեն ոլորում ու փետրում էր ցանցառ բեղի ծայրերը: Այնուհետև, երբ բոլոր նամակներն աչքի անցկացրեց պրծավ, խոնարհվեց գրասեղանի վրա և սկսեց ուղղել ամենից առաջ այն նամակները, որոնք քիչ թե շատ հասարակական նշանակություն ունեին: Անխնայորեն ջնջում էր ահագին պարբերություններ, երբեմն ամբողջ երեսները և տեղը գրում մի քանի տող միայն. ջնջում, փոխում կամ ավելացնում էր այս կամ այն բառը կամ տառը, պեղանտի նախալեճախնդրությամբ և համառությամբ պահպանելով լրագրի ուղղագրությունը, որի ստեղծողն ինքն էր:

Մինչդեռ Պատրիկյանը, սուս ու փուս նստած գրասեղանի ծայրին, շարունակում էր գրել իր հոդվածը, այլևս ուշադրություն չդարձնելով սենյակում տիրող ցրտին: Մի ժամից հոդվածն արդեն պատրաստ էր:

Նա գրած թերթերը դուրսեց իրար վրա ըստ թվահամարների, դրեց քարտուղարի առջև և վեր կացավ:

— Ի՞նչ, դու գնո՞ւմ ես, — հարցրեց քարտուղարը, գլուխը բարձրացնելով և նայելով նրան պլպլան ակնոցի միջից:

— Հա: Ես բուրոսովին սառեցի այստեղ: Գնամ տեսնեմ ի՞նչ եմ անում: Այսօր բան չեմ առել բերանս, թեչ էլ չեմ խմել: Տես այդ հոգվածը, — անսիրտ եմ գրել, — թե բանի նման է՝ տպիր, թե չէ՝ զամբյուղը գցիր: Ցտեսություն:

Եվ Պատրիկյանը դիմեց դեպի դուռը, մի րոպե կանգ առավ նախասենյակում ինչ-որ անվճռականության մեջ, մեքենայաբար թափ տալով ձեռքին բռնած գլխարկը, հետո կամաց ետ դարձավ և ասաց ավելի ևս կամաց, կարծես վախենալով, որ մի ուրիշը կարող է լսել:

— Չե՞ս կարող ինձ մի հինգ ուրբլի փոխ տալ:

— Հինգ ուրբլի՞, — բացականչեց քարտուղարը գլուխն արագորեն բարձրացնելով:

— Հա, խնդրում եմ: Սենյակիս վարձը պետք է տամ: Թե չտամ, դուրս են անում:

— Այս րոպեիս, հինգ ուրբլին ի՞նչ է որ, — ասաց քարտուղարը, շտապով հանեց իր մաշված-զարդված պորտմանեն, բաց արեց, միջի բուր փողը — սև ու սպիտակ դրամներ — թափեց սեղանի վրա ու սկսեց համրել, դրամները մեկմեկ բաշելով մի կողմ, — 10, 20, 35, 50, 58, 60, 62 կոպեկ: Ահա՛ իմ ունեցած ամբողջ կապիտալը: Թե որ սրանից 5 ուրբլի դուրս կգա, վերցրու տար տանտիրոջդ աչքը կոխիր: Հինգ ամիս է՝ ոռճիկ չեմ ստացել, կհա:վատա՞ս, թե չէ:

Մի րոպե Պատրիկյանը լուռ նայում էր քարտուղարի աչքերին:

— Բաս ինչո՞վ ես ապրում, — հարցրեց:

— Դո՞ւ ինչով ես ապրում, — եղավ քարտուղարի պատասխանը:

Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արավ, գլխարկը ոչ թե ծածկեց, այլ ծածկելիս ուղղակի խփեց գլխին և դուրս գնաց: